

ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ*

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր՝ Արսեն Այտընյան, հայերենագիտություն, լեզվի հասարակական բնույթ, բարեշրջություն, անընդհատականություն, համաժամանակություն, գրաբար / աշխարհաբար, գրական լեզու / բարբառներ:

Ամփոփում

Արսեն Այտընյանը (1825–1902 թթ.) եվրոպական հայերենագիտության ականավոր ներկայացուցիչ է, հայ հասարակական մտքի լեզվաբանության ճյուղի տեսաբան, հայերենի պատմության գործնական ուսումնասիրող: Նա նկատելի հետք է թողել հայագիտական-լեզվաբանական, մշակութային-բանասիրական առաջընթացում:

Վիեննայի Մխիթարյան դպրոցի լեզվամշակութային գործունեությունը XIX դ. երկրորդ կեսին լիովին կապվում է մեծ հայագետի անվան հետ: Նա եղել է հեղինակություն լեզվի ընդհանուր տեսության, հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում, մի բնագավառ, որ լայնորեն լույս է սփռում հայերենագիտության հետագա զարգացման ճանապարհին՝ մինչև մեր օրերը:

Լեզուների, նաև հայերենի ինքնության հարցերում Ա. Այտընյանի մոտեցումները եղել են առարկայական՝ հիմնված իր իսկ ձեռք բերած փաստական նյութի վրա: Բուզանդի, Հակոբ Մծբնացու, Փարպեցու, մասամբ նաև Դավիթ Անհաղթի հայտնի բնագրերի լեզվի այն քննությունը, որ ժամանակին կատարել է Այտընյանը, լավագույն օրինակ է եղել բառաքննական-տեսական խորը վերլուծությունների, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը:


Հայերենի պատմության փաստացի, այն է՝ գրավոր աղբյուրների շերտ առ շերտ առանձնացմամբ վերհանումը մեզանում նրանից առաջ ոչ մի ուսումնասիրող չի կատարել, նրա արածը հիմք է հանդիսացել հետագա ուսումնասիրությունների համար: Այտընյանի գլուխգործոց «Քննական քերականությունը» (1866 թ.) բացառիկ աշխատություն է, որն այսօր ևս մնում է ամեն մի ուսումնասիրողի, անխոնջ և ինքնուրույն բուն աշխատանքի հակված հայագետի, ինչպես ասվել է, «սեղանի գիրքը»¹:

* Ներկայացվել է 26. V. 2025 թ., գրախոսվել է 07. VII. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

¹ Meillet. 1936, 17.

Նախաբան

XIX դ. երկրորդ կեսի հայագիտության առաջընթացի գործում Վիեննայի Մխիթարյան միաբանության մեծ ծառայություններից մեկը, եթե ոչ հիմնականը, իրավամբ, «դասական հայերենի» (V դ. 10–60-ական թվականների հին



գրական լեզվի)՝ իբրև նախընտրելի տարբերակի առանձնացումն է մյուս տարբերակներից (հեղինակներ՝ Հովս. Գաթըրճյան, Ա. Մ. Գարագաշյան, Եփր. Չազրճյան և ուրիշներ), գիտական մի սևեռուն մոտեցում, որ անկախ եղած անտեղի հակառակությունից եղել է լիովին առաջադիմական, միանգամայն արդյունավետ²: Այտընյանի քերականությունը այդ խնդրի տեսական քննությունն է՝ լեզվական փաստերի միջոցով, և լուծումը՝ գործնական հիմնավորումների ձևով: Անվանի հայագետի նման գործունեությանը նվիրված աշխատանքներում «դասական հայերենի» հարցին ամբողջական ուշադրություն չի դարձվել, եղել է ակնարկային կամ թեթևակի անդրա-

դարձ: Այնինչ, այդ ուղղությամբ նրա գործունեությունը՝ 1) ծավալվում է հայերենի քերականություն գրելու, այն է՝ աշխարհաբարի ինքնությունը, նրա պատմական հիմքերը բացահայտելու և բնութագրելու նպատակով, այլև 2) տեսական շեշտվածությամբ ուրվագծում է գրական հայերենի տարբերակների գոյությունը, հին մատենագրության լեզուն, իրոք, դասական համարելու՝ ի հակադրություն ժամանակի ոչ գրական («խոսակցական», «բարբառային» կամ «աշխարհաբար», հետագայում՝ «նախնյաց ռամկորեն») լեզվի, 3) գործնականում («բարելավման» նպատակով) վերանայում է իր ուսուցչի՝ Վրթ. Չալրխյանի քերականությունը, որը լույս է տեսնում «հանդերձ փոփոխմամբք եւ յաւելլուածովք» (1885 թ.)³:

Անդրադառնալ Այտընյանի տեսական լեզվաբանական և հայերենագիտական ժառանգությանը, ըստ էության, նշանակում է քննության շրջագծի մեջ առնել նրա ձեռքբերումները՝ 1) գիտական հանդեսներում տպագրված («Քննական քերականություն» աշխատությունը գրելուց առաջ և հետո) առանձին

² Հմմտ. Առաքելյան. 1981, 91–106: Ամբողջովին իրական, ուստի միանգամայն ճիշտ կարծիքի է է. Աղայանը. «Գրաբարի պատմության ուսումնասիրության բնագավառում այս շրջանի (XIX դ. 40-ական թվականներից մինչև դարավերջը – Վ. Հ.) և առհասարակ գրաբարի ուսումնասիրության ողջ պատմության համար խոշորագույն հայտնագործություն է դասական և ետդասական գրաբարի տարբերակումը և դրանով պայմանավորված՝ դասական գրաբարի էական հատկանիշների և այն առանձնահատկությունների բացահայտումը, որոնցով նա տարբերվում է հետագա շրջանների գրաբարից» (Աղայան. 1974, 59):

³ Երրորդ կեսի առնչությամբ մանրամասն տե՛ս Ջահուկյան. 1974, 390–445: Հեղինակի տեսական բացառիկ վերլուծությունը և տեղին գնահատությունը՝ հրատարակության մեջ, ցավոք, ունեն բազմաթիվ վրիպակներ, վրիպումներ և անճշտություններ:

հողվածներում, 2) «Քննական քերականություն» աշխատության երեք բաժիններում («Նախաշավիղ», էջ 23–354, «Քերականություն», էջ 1–428 և «Հավելված»՝ «Համառոտ տեսություն գրաբար հայերեն լեզվի», 429–489) և 3) Չալրխյանի քերականության վերանայված հրատարակության աշխատանքներում:

Հիշյալ երեք ձեռքբերումներում կա անվանի հայագետի գիտական-իմացական նպատակադրումն այն իմաստով, որ հայերենը իր գրավոր հիմքերն ունեցող լեզու է, պատմական առաջընթացի բերումով թեև կրել է զգալի փոփոխություններ, սակայն պահպանել է ժառանգորդական օրինաչափություններ, որոնք տիպական են նոր վիճակի՝ աշխարհաբարի տեսքով, որն էլ ունի նոր գրական լեզու լինելու հնարավորություն:

Ուսումնասիրել այդ տարբերությունները, մանավանդ օրինաչափությունները ոչ այլ կերպ, քան ավանդված գրական հուշարձանների նյութի հիման վրա, եղել է ժամանակի գիտության նպատակադրումը, և այդ գործում հսկայական է Այտընյանի ներդրումը:

Կյանքը և գործունեությունը

Արսեն Այտընյանի առաջին կենսագիրը Մխիթարյան միաբանության անդամ Գ. Մենևիշյանն է, ով նրա կենդանության օրոք գրել է ակնարկ: Այն («առաջին ձեռքից») տեղեկություններ է պարունակում արբահոր մասին, որից օգտվել են հետագա գրեթե բոլոր ուսումնասիրողները⁴:

Արսեն (Վիչեն) Պետրոսի Այտընյանը ծնվել է Կ. Պոլսում, 1825 թ., վախճանվել 1902 թ.՝ Վիեննայում: Յուրահատուկ տաղանդի և աշխատանքի շնորհիվ Վիեննայի Մխիթարյան դպրոցի միջավայրում նա անցել է յուրօրինակ ճանապարհ՝ միաբանության սանից մինչև առաջին դեմք (1842 թ. Միաբանության անդամ, 1885 թ.՝ արբահայր):

Նա ժամանակի գիտության մեջ տեսական լայն ընդգրկումների, մասամբ՝ բնական, ամբողջովին՝ հասարակական մտքի տեր գիտնական է: Մի շարք նոր՝ իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, հունարեն, արաբերեն, թուրքերեն, մեռած՝ հին հնդկերեն (սանսկրիտ), հին պարսկերեն լեզուների իմացությունը նպաստել է ժողովուրդների կյանքի, մշակույթի, մասնավորապես՝ հայ ժողովրդի և նրա լեզվի պատմությունը ներկայացնելուն՝ հարափոփոխ զարգացման և առաջընթացի ձևով: Տեսական այդ զբաղվածությունից բացի՝ Այտընյանը գործնական տևական աշխատանք է ծավալել Մխիթարյանների վարժարաններում՝ իբրև ուսուցիչ (Կ. Պոլսում, Չմյուռնիայում):

Հայ պարբերական մամուլի երևելի օրինակ՝ մինչև օրս անխափան լույս տեսնող «Հանդես ամսօրյա»-ի հիմնադիր (1887 թ.) Այտընյանը նրանում տպագրել է հայոց լեզվի բնույթի և պատմության կնճռոտ հարցերի վերաբերյալ տարբեր ծավալի հոդվածներ: Դրանք, ի դեպ, այնքան էլ տեղ չեն գտել հայերենագիտական հետագա ուսումնասիրություններում: Հիմնական ուշադրության առարկա

⁴ Մենևիշյան. 1895: Հմմտ. Աղայան. 1958, 269–288, Այտընյան. 1987, 3–10, Ջահուկյան. 1954, 18, Ջահուկյան. 1955, 394–456, Ջահուկյան. 1960, 433–436, Ջահուկյան. 1974, 390–445, Աբրահամյան. 1969, 352, Պետրոսյան. 1987, 31–32, Համբարձումյան. 1990, 127:

են եղել «Քննական քերականություն»-ը և նրա հրատարակած Վրթ. Չալրխյանի գրաբարի քերականությունը՝ փոփոխություններով և լրացումներով⁵:

Նկատենք, որ հայերենի հնչյունաբանության պատմության համար բացառիկ նշանակություն ունի Այտընյանի «Տառադարձության խնդիր» ծավալուն հոդվածը՝ լույս տեսած «Հանդես ամսօրյա»-ի 1888–1889 թթ. տարբեր համարներում:

Այտընյանի կյանքը և գիտական-մտավոր գործունեությունը ներկայումս շարունակում է օրինակ լինել ամենից առաջ ընդհանուր հայագիտության, հայոց լեզվի պատմության համար: Անվանի հայագետի կյանքի, եկեղեցական գործունեության, նրա վաստակի գնահատության վերաբերյալ առկա է մեծաքանակ գրականություն, իսկ լեզվագիտական հայացքներին նվիրվել են հատուկ ուսումնասիրություններ⁶:

Հեղինակած աշխատությունները, լեզվաբանական ըմբռնումները

Հայ լեզվաբանության պատմության մեջ Այտընյանը առավելապես հայտնի է իր «Քննական քերականություն» աշխատությամբ, մանավանդ նրա ներածություն («Նախաշավիղ»՝ մանրատառ շարվածք, փոքր ֆորմատով, 334 էջ) բաժնով, որովհետև նրանում քննվում են առհասարակ լեզվի տեսության և մասնավորաբար հայերենի պատմության հարցեր՝ իր ժամանակի լեզվաբանական ըմբռնումների սահմաններում⁷:

Այնինչ, հայերենի վերաբերյալ ժամանակի առումով հրատապ շատ հարցեր նույնպես եղել են նրա ուշադրության կենտրոնում ոչ միայն քերականության լույս ընծայումից առաջ, այլև հետագայում⁸:

Այտընյանը լեզվի պատմաբան է, հայոց լեզվի գրավոր շրջանի պատմության համակողմանի ուսումնասիրող: Համակողմանիությունը վերաբերում է ոչ միայն հայերենի ներքին զարգացման և փոխոխությունների բնույթին, այլև դրանց հիմք հանդիսացած ընդհանուր լեզվաբանական տեսության միջնորդավորությանը: Նա կանգնած էր ժամանակի հասարակական գիտության (փիլիսոփայության, հոգեբանության, լեզվի մասին տեսության) զարգացման մակարդակի վրա: Ինչպես եվրոպացի, հատկապես՝ գերմանացի հումանիստները, այսպես կոչված, պատմության փիլիսոփայությունն ուսումնասիրող մտավորականության մեծ ներկայացուցիչները, նույնպես և Այտընյանը լեզվի և այն կրող հանրության առնչությունների հարցերում անվարան կանգնած է

⁵ Չ ա լ ը խ ե ա ն. 1885, Հ ա մ բ ա թ ու մ ե ա ն. 1995, 360–379:

⁶ Ա բ ռ ա հ ա մ յ ա ն. 1945, Ա բ ռ ա հ ա մ յ ա ն. 1984, 210–212:

⁷ Տե՛ս Ա դ ա յ ա ն. 1958, 269–288, Ջ ա հ ու կ յ ա ն. 1960, 433–436:

⁸ Մասնավորապես տե՛ս Մատենագրական խորհրդածություններ. – «Եվրոպա», 1856, 106–107, 111, 118–119, Լեզու եւ առանձին մեր հայերէն լեզուն. – «Սէր (Ուսումն հնգետասանօրեայ)», 1860, 29–30, 47–48, 1861, 73–76, 122–128, 153–159, 187–188, 197–204, Նորագոյն հայերէն լեզուն. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1887, 9, 133–135, Տառադարձութեան խնդիր. – «Հանդէս ամսօրեայ», 1888–1889, Ա յ տ ը ն ե ա ն. 1898, 377–380:

ոչ թոփաքածև զարգացման, այլ բարեշրջության (էվոլյուցիոնիզմի) տեսական հիմքի վրա: Մշակույթը, մանավանդ նրա արտացոլում հանդիսացող լեզուն լիովին ներկայացնում է այն կրող ժողովրդի անցած ուղին՝ պատմությունը, գոյաձևը: Ըստ Այտընյանի՝ ուսումնասիրել լեզուն, կարողանալ թափանցել նրա բաղադրիչ իրողությունների դրսևորումների մեջ նշանակում է առաջին հերթին տեղեկանալ տվյալ հանրության կյանքում տեղի ունեցած իրադարձություններին՝ ըստ ամենայնի (ամբողջությամբ ու մասամբ):

«Քննական քերականություն» աշխատությունը տեսական հիմունքներով շարադրված գործ է, գրված է լեզվի և հանրության առնչության վերաբերյալ վերը նշված ըմբռնումով, որը նկատելի է գրքի ողջ շարադրանքում, մանավանդ ներածություն («Նախաշավիղ») բաժնի առաջին մի քանի մասերում, որոնք ուղղակիորեն վերաբերում են տեսական հիշյալ կարգի հարցերին՝ իբրև սկիզբ անցնելու հայերենի բուն գրավոր շրջանի պատմությանը:

Այտընյանը նախագրային հայերենի հազարամյա պատմությանը (մ. թ. ա. IV հազարամյակ – մ. թ. IV դ.) չի անդրադառնում: Տեսական առումով նրա քերականությունը երևան է գալիս այն ժամանակաշրջանում, երբ գերմանական հասարակագիտության, մանավանդ լեզվի հարցերում դրվում էին, ինչպես ընդունված է ասել, պատմահամեմատական ըմբռնումների հիմքերը՝ թե՛ գործնական և թե՛ հատկապես տեսական առումներով: Առաջինի գլուխ էր կանգնած Ֆր. Բոպը, իսկ երկրորդի՝ Վ. Ֆոն Հումբոլդտը. առաջինը քերական-լեզվաբան է, իսկ երկրորդը՝ լեզվաբան-փիլիսոփա, ուրեմն XIX դ. 1-ին կեսին լեզվի հարցերում հասարակական միտքը նոր շրջան էր ուղեգծում, այդ ամենին ամբողջովին տեղյակ էր Այտընյանը:

Անվանի հայագետի քերականության մեջ, դարձյալ տեսական առումով, որևէ խոսք չկա այդ նոր ըմբռնումների մասին, սակայն նրա վերլուծությունները, հայերենի փաստերի վրա հիմնված դատողությունները և ճիշտ հիմնավորումներն ամբողջովին արտահայտում են ժամանակի գիտության նման ըմբռնման մակարդակը. լեզվի զարգացումը հանրության առաջընթացի արտահայտությունն է, լեզուն այն կրող ժողովրդի «ոգու արտահայտությունն» է՝ լեզու-խոսք, հանրություն-անհատ հակադրությունների պայմաններում: Այտընյանի գրքի «Նախաշավիղ»-ում «Լեզու՝ իբրև պատմության նյութ» ընդհանուր խորագրի տակ, առաջին երեք կետերի շարադրանքին ուշադիր, անշտապ հետևելիս լիովին նկատելի է դառնում անվանի լեզվաբանի տեսությունը լեզվի, առանձնապես գրավոր հայերենի անցյալի և ընթացքի վերաբերյալ:

Եթե ամբողջ գիրքը համարվում է քերականություն, ուրեմն հեղինակը նկատի ունի հայոց լեզվի պատմական քերականությունը, իսկ որպես տեսություն՝ այն սկիզբ է հայոց լեզվի համընդհանուր պատմության համար. սա է այն մեծ արժեքը, որ ունեցել է այդ գիրքը թե՛ իր ժամանակին և թե՛ հետագա գրեթե բոլոր ժամանակներում:

Բացառությամբ Գ. Բ. Ջահուկյանի ծեռագիր ատենախոսության մեջ՝ Այտընյանի աշխատության գնահատությանը վերաբերող վերլուծության, լեզվաբան-փիլիսոփա Ա. Ս. Աբրահամյանի մենագրության՝ նվիրված Այտընյանի լեզվաբանական հայացքների քննությանը, ինչպես նաև լեզվաբան-գրաբա-

րագետ Ա. Ա. Աբրահամյանի ծավալուն հոդվածի՝ գրված հատկապես «Նախաշավիղի» մանրամասն վերլուծության նպատակով, նախկինում երևան եկած աշխատանքներն ավելի շատ նկարագրական-բանասիրական են, ակնարկային, քան անվանի լեզվաբանի հիմնական աշխատության բնագրի փաստական վերլուծությունների և ըստ այդմ ունեցած կողմնորոշումների և մոտեցումների գնահատություն⁹:

Այս հանգամանքը, անշուշտ, այնքան ուսումնասիրողների վերլուծության թերացումը չէ, որքան Այտընյանի գիտական ընդգրկումների և ըմբռնումների (կոնցեպցիայի) խորը նկատի ունեցումը՝ առհասարակ մարդկային լեզվի, ընդամենի հայերենի ծագման ու պատմական ընթացքում կրած փոփոխությունների և կայունացումների մեջ: Քննական քերականության էջերում հեղինակի կատարած աղբյուրագիտական-բնագրային փաստերի քննությունը, ժամանակի ընթացքի մեջ («դար առ դար») գրավոր աղբյուրների հարաբերականորեն ստանդարտ լեզվի առնչությամբ շեղումների մեջբերումն ու գնահատությունը զրեթե ամբողջովին այսօր էլ կարող են հետաքրքրել հայոց լեզվի պատմության մասնագետներին: Նման քննություն իրենից հետո այլևս չի կատարվում հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում, ուստի այն բացառիկ է:

«Քննական քերականություն» աշխատության կառուցվածքը

Աշխատությունն ունի ուշագրավ կառուցվածք՝ տարբեր բաժիններ, ընդ որում իրենց ենթաբաժիններով և առանձին-առանձին ներկայացվող մասերով. տպավորիչ է քննության առարկա նյութի համակարգված բաշխվածությունը:

1. «Նախաշավիղը», որն ունի երկրորդ վերնագիր՝ «Արդի հայերեն լեզուի ծագումն, էությունը, պատմութիւնն ու ներկայ վիճակը», ներկայացնում է 17 կետի մեջ տեսական վերլուծություն, իսկ մինչ այդ կետերը՝ տալիս է երկու էջից փոքր-ինչ ավելի շարադրանք՝ «Լեզու՝ իբրև պատմութեան նիւթ» վերտառությամբ (վեջինս նշվում է միայն բովանդակության ցանկում): Այդտեղ Այտընյանը հանդես է գալիս լեզվի ուսումնասիրության՝ ժամանակի լեզվաբանության մեջ հայտնի ձևակերպումով՝ իբրև կուլտուր-պատմական ուղղության ներկայացուցիչ՝ որպես բնաբան բերելով «Ներկան անցածով լուսատրելու է» թեզը: Այդ ուղղությունն ընդհանրապես հիմնված է զարգացման հարցերում բարեշրջության վրա, որին հարում է Այտընյանը՝ իբրև իր ժամանակի առաջադեմ հասարակագետ լեզվաբան:

Հիշյալ 17 կետերից առաջին հինգում կատարվում է IV-V դդ. մեզ հասած գրական հուշարձանների վերլուծություն (Այտընյանի ձեռքի տակ են եղել Բուզանդի Պատմությունը, Հակոբ Մծբնացու «Գիրք, որ կոչի Ջգօն ...» (թարգմանական) երկը, Փարպեցու Պատմությունը, Դավիթ Անհաղթի որոշ երկեր)¹⁰,

⁹ Զ ա հ ու կ յ ա ն. 1955, 394–456, Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1984, Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1945, 215–255:

¹⁰ Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց. 1832, Յակոբ Մծբնայ Հայրապետ. 1824, Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց. 1904:

ընդ որում հետևյալ վերնագրերի տակ. 1. «Գրաբար և աշխարհաբար հայերէնի ընդհանուր գաղափարը», 2. «Մարդկային լեզուի բնական ընթացքն ու փոփոխութիւնները», 3. «Հայաստանի հին լեզուին վիճակը. մեզի ծանօթ գրաբար հայերէնը. հին գաւառականներու գոյութիւն», 4. «Հին Հայաստանի մէջ ռամկորէն լեզուի մը հետքեր. կամ աշխարհաբար հայերէնի ծագումը. հին մատենագրական եւ հին ընտանեկան (իմա՛ խոսակցական կամ ոչ գրական – Վ. Հ) լեզու. Դ եւ Ե դար», 5. «Հին ընտանեկան լեզուին կերպարանքը, կամ սկզբնական ռամկորէնին յատկութիւնները (ըստ քերականական օրինաց)»¹¹:

Այս կետերում ներառված փաստերի վերլուծությունը և տեսական գնահատությունն Այտընյանի քերականության հիմնական մասն են, քանի որ նրանում է գրավոր շրջանի (V դ. սկսյալ) հայերենի ներսում գրական և ոչ գրական (խոսակցական՝ «ռամկորէն լեզու») տարբերակների զանազանման և ապացուցման սկիզբը: Նման ձեռնարկում այդ շրջանի հայերենի վերաբերմամբ նրանից առաջ ոչ ոք հանձն չի առել իրագործելու: Նկատենք նաև, որ այդ հինգ կետերից 2-րդը, ինչպես երևում է նաև վերնագրից, բուն խնդրի առնչությամբ ընդհանուր լեզվաբանական է, որում Այտընյանը, բնականաբար, տուրք է տալիս իր ժամանակի տեսական պատկերացումներին, և դա միանգամայն բնական է:

Ինչպես հիշյալ, այնպես էլ մյուս կետերում առաջ քաշված հարցերի գիտական վերլուծություններն արտասովոր են՝ նաև, այսպես կոչված, կատարման տեխնիկայի առումով. շարադրանքի հիմնական մասում տեսական վերլուծությունն է, իսկ տողատակերում, ըստ անհրաժեշտության, բերվում են օրինակներ վերը նշված գրական հուշարձաններից՝ առանձին նշումով, բնագրային հատվածներով, միանգամայն համոզիչ և անառարկելի:

Հաջորդ կետերից երեքում՝ 6. «Միջին դարու հայերէնի վիճակը՝ գրաբար եւ աշխարհաբար. Զ եւ Է դար», 7. «Գրաբար՝ մեռեալ լեզու, եւ կերպատրեալ աշխարհաբար հայերէն. Ը. Թ. Ժ դար», 8. «Ստորին դարեր: Նոր հայերէնի հինէն զատուիլն ու յառաջանալը. նախնեաց ռամկորէն եւ աշխարհաբար մատենագրութիւն. ԺԱ–ԺԴ դար», ներկայացվում է հայերենի հետագա պատմությունը՝ բնագրային նույնչափ հարուստ և տեղին վկայակոչումներով՝ իբրև անխափան հիմնավորում տեսական յուրօրինակ վերլուծությունների և բնութագրումների¹²:

Այս կետերում գրաբար-աշխարհաբար հակադրությունը ակնհայտ է, դրանք հակադիր են ըստ ամենաէական հատկանիշի՝ հանրության վերաբերությամբ՝ իբրև կենդանի / ոչ կենդանի («մեռած») հաղորդակցական միջոցի. ածանցյալ հատկանիշներ են՝ տևական / ոչ տևական («կարճ») ժամանակային

¹¹ Նշվածներից վերջին՝ 5-րդ կետը, բավականին ընդարձակ է (էջ 61–120), առանձին ենթավերնագրերի տակ հեղինակը փաստական առատ նյութի վկայաբերումներով անդրադառնում է բառագիտական, ձևաբանական («ճշդի քերականական կազմութեան») և համաձայնության («շարահիսութեան») հարցերի՝ ժամանակի պատկերացումների շրջանակում:

¹² Տե՛ս Ա յ տ ը ն ե ա ն. 1866, 121–161:

ընդգրկումը, հարուստ / ոչ հարուստ («աղքատ») գրական ավանդույթի հետևելը, մշակվածություն (կանոնիկություն) / ոչ մշակվածություն (խոսակցական, ավելին՝ բարբառային լինելը) և այլն: Այս հատկանիշները, իրավամբ, եղել են և տեղ ունեն հայերենի ընդհանուր պատմության բնութագրումներում, որոնց ուսումնասիրողը մեզանում ամենից առաջ եղել է Այտընյանը:

«Նախաշավիղ» բաժնի 9-րդ կետը («գլուխը») վերնագրված է՝ «Նոր ժամանակներ. գաղթականութիւնք. նոր լեզուին ճիւղաւորութիւնը կամ արդի հայերէն գաւառականները. ԺԵ–ԺԹ դար»¹³: Ինչպես նկատում ենք, այս բաժինը ևս (5-րդ կետի նման) բավականին ընդարձակ է, թերևս աշխատության առկա հիմնախնդիրներից առաջիններից՝ նվիրված հայերենի բարբառների: Այտընյանն այստեղ առանձնացնում է չորս տեսակ բարբառներ («գաւառական»)¹⁴:

Եթե XIX դ. 90-ական թվականներից մինչև օրս շարունակվող հայերենագիտական ուսումնասիրությունների մեջ նշելու լինենք երկու-երեք հիմնախնդիր, ապա դրանցից մեկը, իրավամբ, հայերենի բարբառներին է վերաբերում: Ուսումնասիրողները (Ա. Ղարիբյան, Է. Աղայան, Գ. Զահուկյան և ուրիշներ) Այտընյանին են վերագրում հայ բարբառների, այսպես կոչված, «աշխարհագրական դասակարգման» մենաշնորհը, որը, առանց մանրամասների մեջ մտնելու, կարելի է ասել, թե այնքան էլ իրական չէ (եթե չասենք՝ սխալ)՝ ոչ միայն տեսականորեն, այլև երևույթի բնութագրականության («խարակտերոլոգիայի») տեսանկյունից¹⁵:

Այդ «գավառականներն» են՝ ըստ Այտընյանի. ա) «միջին գաւառական. Հայաստան (Վան, Միջագետք և այլն)», բ) «Կոստանդնուպոլիս–Փոքր Ասիա» (չի նշվում դիրքը), գ) «արեւմտեան. Լեհաստան–Առտեալ». դ) «արեւելեան. Աժտէրխան–Պարսկաստան, որ կը ձգուի Ռուսաստանէն մինչեւ Հնդկաստան»¹⁶: Հազիվ թե կարելի լինի նման խմբավորումը համարել գիտական դասակարգում, որ, ինչպես գիտենք, նշվում է հետագա (դասական) բարբառագիտության գրեթե բոլոր աշխատություններում: Եթե միայն խմբերի անվանումով դատելու լինենք, ապա Այտընյանից դեռևս հարյուրամյակներ առաջ նման խմբավորում է նշում, օրինակ՝ քերական Ստեփանոս Սյունեցիին (VIII դ.)¹⁷: Ք. Պատկանյանը կատարում է շուրջ մեկ տասնյակ («Աստրախանի, Էրիվանի, Թիֆլիսի» և այլն) բարբառների բառային-քերականական վերլուծություն՝ առանց դրանց «աշխարհագրական» խմբավորման մատնանշման¹⁸: Եվ թեկուզ այդպիսին, նման խմբավորումը, կարելի է ասել, դուրս է բարբառների ներքին բնութագրումների կարևորությունից, երևույթի արտալեզվական կողմին է վերաբերում:

¹³ Այտընյան. 1866, 161–222:

¹⁴ Այտընյան. 1866, 168–222:

¹⁵ Հարցի քննության մանրամասների մեջ չենք մտնում՝ այս հոդվածի բնույթից ելնելով:

¹⁶ Այտընյան. 1866, 166.

¹⁷ Տե՛ս Ադոնց. 1915, 187: Հմմտ. Զահուկյան. 1954, 181. Զահուկյան. 1972, 16–17:

¹⁸ Патканов. 1864, 24–103.

Այսպիսով՝ «Նախաշավիղը» այնքան էլ ներածություն չէ, ինչպես նկատված է նաև հետագա ուսումնասիրողների կողմից: Այն մի առանձին աշխատություն է առհասարակ հայերենի պատմության վերաբերյալ՝ տեսական բնույթի աշխատություն, որ ապացուցողական կողմով հենվում է գործնականի, այսինքն՝ լեզվական փաստերի վրա, ուստի եղել է ավելի լայն ուշադրության առարկա, քան, ասենք, բուն մասը՝ քերականությունը, առավել ևս, քան վերջինը՝ գրաբարի սեղմ նկարագրությունը:

2. «Քերականությունը», ինչպես վերը նշեցինք, Այտընյանի աշխատության երկրորդ բաժինն է, որը Թրակացու քերականության թարգմանության սխեմայով կատարվող վերլուծություն է արևմտահայ աշխարհաբարի, որ պատմականորեն առանձնացել էր XIX դ. 10–20-ական թվականներին՝ իբրև ինքնուրույն լեզվավիճակ¹⁹: Այստեղ Այտընյանը տալիս է այդ լեզվավիճակի նորմատիվ նկարագրությունը²⁰:

Արևմտահայ աշխարհաբարի (այլ անվանումով՝ գրական արևմտահայերենի) համաժամանակյա ուսումնասիրությունը կատարվել է մի քանի տասնամյակ ավելի վաղ, քան գրական արևելահայերենինը (նկատի ունենք Ստ. Պալասանյանի աշխատությունները), որի խնդիրն է եղել գրական ուղին բռնած աշխարհաբարի, այսպես կոչված, «դատի պաշտպանությունը»²¹:

Փաստորեն, Այտընյանի հիմնարար սույն աշխատությունը արևմտահայ նոր գրական լեզվի առաջին ուսումնասիրությունն է, որն ունեցել է նաև մշակութային առաջընթացի կողմնորոշման նպատակադրում: Նա կարծում է, որ «Հայերեն լեզուն մէկանց երկու տեսակ կը բաժնուի. 1. հին հայերէն, որ կ'ըսուի *գրաբար*, և հիմայ կը գրուի ու չի խօսուիր. մեռեալ լեզու. եւ 2. նոր հայերէն, որ կը կոչուի *աշխարհաբար* կամ *արդի հայերէն*, եւ հիմայ կը գրուի ու կը խօսուի. կենդանի լեզու»²²:

ա) Հայերենի քերականական կառուցվածքը նորմատիվ բնութագրերում նույնական է հնդեվրոպական մյուս լեզուների կառուցվածքի հետ: Նրա բա-

¹⁹ Գ. Բ. Զահուկյանը, ոչ անկախ իր նախորդ ուսումնասիրողներից (Հ. Աճառյան և ուրիշներ), երկճյուղ՝ արևելյան և արևմտյան աշխարհաբարի առանձնացումը դնում է հիշյալ դարի կեսերը, այնինչ գրավոր աղբյուրների մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այն տեղի է ունեցել ավելի վաղ (հմմտ. Զ ա հ ու կ յ ա ն. 1964, Ա ճ ե մ յ ա ն. 1971):

²⁰ Այտընեան. 1866, 1–428:

²¹ Նկատենք, որ Միքայել Նալբանդյանի նպատակադրումը, ինչպես նշում է նաև Աբրահանյանը, այս խնդրի կապակցությամբ մնում է անավարտ: Նա գրում է, որ «Այտընյանի ու Նալբանդյանի աշխատությունները (առաջինինը հրապարակված, երկրորդինն անհայտության մեջ թաղված) լինելով նույն էպոխայի ծնունդը, «գրապայքարի» պայմաններում բնականաբար պետք է տային իրենց մեջ քննարկվող նյութի (աշխարհաբար լեզվի) տեսական հիմնավորումը, նրա՝ մատենագրության լեզու դառնալու իրավունքի ճշտությունը: Այդ նպատակի համար էին կոչված Այտընյանի «Նախաշավիղն» ու Նալբանդյանի «Ներածությունը» (Աբրահանյան. 1945):

²² Այտընեան. 1866, 1:

ղաղրիչների նկարագրությունը վերընթաց կարգի մեջ սկսվում է նվազագույնից դեպի առավելագույնը՝ *հնչյուն – բառ – նախադասություն*՝ իբրև մակարդակային միավորներ, որոնք ունենում են իրենց աստիճանները՝ *վանկ, բառածև և բառակապակցություն*: Ինչպես ամեն մի լեզու, այնպես և հայերենը սերվում է խոսքից. «Ամեն լեզուի մեջ խօսքը բառէ կը շինուի, բառը՝ վանկէ, ու վանկը՝ գրէ: Ուրեմն խօսուած կամ գրուած խօսքին սկզբնական արմատն է *գիր*»²³:

բ) Այս քերականության կառուցվածքը բավականին մանրամասն է, ինչպես որ ենթադրում է եվրոպական լեզուներից գրեթե յուրաքանչյուրի մակարդակային բաշխվածությունը՝ համաձայն հունահռոմեական քերականությունների հիման վրա միջնադարում եղած ավանդույթի (Թրակացու և Դիսկոլոսի դասագրքերը):

Ընդ որում ենթակարգումով (սուբորդինատիվ ձևով) նշվում են՝ մասեր (1–3), գլուխներ (1–8), մաս առաջինում («Բառ կամ մասանց-բանի կազմութիւն»)՝ գլուխ 1–8, նվիրված անուն (գոյական, ածական, թվական), դերանուն, բայ, դերբայ, մակբայ, նախադրություն. շաղկապ և միջարկություն մակարդակային միավորներին, մաս երկրորդում («Խօսք կամ բառերու համաձայնութիւն»)՝ գլուխ 1–4, նվիրված համաձայնություն, խնդրառություն, մասանց-բանի կիրառություն և քերականական ձևեր իրակություններին, մաս երրորդում («Լեզուի յատկութիւնք»)՝ գլուխ 1–3, նվիրված «գրերու յատկութիւնք», «բառերու յատկութիւնք» և «խօսքի յատկութիւնք» իրողություններին: Ընդամին՝ գլուխներից յուրաքանչյուրն ունի մի քանի բաժին («յօդուած»), իսկ յուրաքանչյուր բաժին՝ առանձին վերնագրերով ներկայացվող նյութի վերլուծություն (շարադրանք). օրինակ՝ քերականության առաջին մասի անուն (գոյական անուն) գլխի տակ ներկայացվում է 4 բաժին («յօդուած»), որոնցից առաջինում քննության են առնվում 1. անվան թիվը, հոլովը և հոլովումները, 2. անվան հոդը, 3. գոյականը և ածականը, 4. հատուկ, թվական ու մասնական անունները, և դրանք էլ իրենց ավելի մասնավոր (կոնկրետ) վերնագրերի տակ կամ առանձին հատվածներով:

գ) «Քերականությունը» հիշյալ երեք մասերից բացի պարունակում է մի լրացուցիչ բաժին՝ «Ուղղագրութիւն, առոգանություն, տաղաչափութիւն» բաժիններ (էջ 337–428): Ըստ հեղինակի՝ «Ուղղագրութիւն» բառերուն անսխալ գրուածքն է, որ բովանդակ քերականական արուեստին գիտութենէն կախում ունի: *Առոգանութիւն*՝ որևիցէ գրուածքն ուղիղ արտասանելն է: *Տաղաչափութիւն*՝ խօսքին վանկերն որոշ չափով ու թուով շարելու արուեստն է, որով ոտանաւորը կը կազմուի»²⁴: Այդ բաժնի վերլուծությունն ու շարադրանքը նույնպես, ինչպես գիտական փորձի նույնպիսի ոգու արտահայտություն, մանրամասն են և գործնականում միանգամայն հասկանալի և կիրառելի: Նման քննության միտումն այն է, որ գրական լեզվի նույն երևույթներին անհրաժեշտ է որոշակի ուշադրություն դարձնել, ապահովել նրանց կիրառական կողմը. դա

²³ Այտընեան. 1866, 1:

²⁴ Այտընեան. 1866, 337:

ոչ այնքան ձևային քերականություն է, որքան իմաստային («արվեստով խոսքի») հմտությունների ամբողջություն (հրահանգ):

Այտընյանի աշխատության թե՛ «Նախաշավիղը» և թե՛ «Քերականությունը» հայ քերականագիտության պատմության մեջ աննախադեպ երևույթ է լեզվի նյութի՝ բովանդակության ամեն կարգի վերհանման, մանրամասն, առանց բացառության դասակարգման և տեսական խոր վերլուծության տեսանկյունից:

Այս աշխատությունը ընդհանուր անվանումով քերականություն կոչելը եթե տեղին է, ապա պետք է նաև լրացուցիչ նկատի ունենալ, որ այն նոր գրական լեզվի համաժամանակյա քննություն է, այդպիսին լինելու լիիրավությամբ: Տեղին կլինի ասել, թե Այտընյանի գրքի այս բաժինը՝ աշխարհաբար լեզվի քերականությունը, իր բովանդակությամբ գրական հայերենի պատմություն է, ընդամին՝ հին լեզվի ակունքներից սկիզբ առնող և ամրակայվող:

Տեսական հիմունքներով և գործնական վերլուծությամբ ներկայացնել նոր գրական լեզվի այդ տարբերակի՝ «արդի հայերենի» ամեն մի կենդանի իրողություն նշանակում է ժամանակի իրականության մեջ երևան եկած հակառակության («գրապայքարի») հարցը լուծել վերջնական ձևով և մեկընդմիջտ, և դա այդպես էլ եղավ նաև այս քերականության շնորհիվ:

3. «Նախաշավիղը» և «Քերականությունը» այդ վերջին հարցում ունեցել են իրենց հիմնարար նշանակությունը, սակայն ավելի ամբողջական են դառնում իրենց նյութի բուն ակունքի՝ լեզվի հիմքի վրա, ուստի հարկ է եղել սեղմ նկարագրությամբ, իբրև աշխատության ամբողջացում, անդրադառնալու այդ հիմքին՝ գրաբարին, իբրև «Յաւելուած» («Համառօտ տեսութիւն գրաբար հայերէն լեզուի»)²⁵: Այն ունի գրաբարի նկարագրական քերականության և՛ ընդհանուր կողմեր, որոնք առնչվում են հայ քերականական մտքի ավանդույթին, և՛ տարբերություններ, որոնք Այտընյանի տեսական ըմբռնումների արգասիքն են²⁶:

Այսպես, Այտընյանը գրաբարի (հին գրական լեզվի) հոլովման համակարգում ընդունում է հիմնականում յոթ հոլով՝ նաև ներգոյականը (հմտ. *ի բանի* – *ի բանս*, *յանծինս* – *յանծինս* և այլն), որը տարբեր է նախորդներից. «Նախնի քերականք կոչականով մեկտեղ վեց հոլով կը դնէին՝ ըստ յունաց. յետին դարերուններն սկսան տասը դնել, իսկ արդիներէն ոմանք վեց հոլով միայն կը համրեն՝ առանց կոչականի ու ներգոյականի»²⁷:

Ընդունում է նաև, այսպես կոչված, «երկրորդական հոլովներ»՝ ի տարբերություն վերը նշված յոթ «գլխավոր» հոլովների, դրանք են՝ *պարմական* (օրինակ՝ *գարքայէ* «արքայի մասին»), *պարառական* (օրինակ՝ *զքաղաքաւ* «քաղաքի շուրջ՝ մոտ») և *կոչական* (հունարենի օրինակով՝ ուղղական՝ *Փիլիպպոս* – կոչական՝ *Փիլիպպէ*)²⁸:

²⁵ Այտընեան. 1866, 429–489:

²⁶ Կարելի է որոշակի կապ տեսնել այս «Յաւելուած»-ի և Վրթ. Չալիխյանի քերականության վերահրատարակման ժամանակ՝ Այտընյանի կատարած լրացումների և հավելումների միջև:

²⁷ Այտընեան. 1866, 432:

²⁸ Այտընեան. 1866, 437:

Այնուհետև՝ ի տարբերություն պարզ հոլովների (օրինակ՝ *բան- բանի* և այլն) զանազանում է նաև «նախդրի հոլովներ»՝ *ի (յ), գ, ց, առ* նախդիրներով (օրինակ՝ *ի լուսոյ, ցնոսա, առ իս* և այլն), *ընդ, ըստ*՝ իբրև նախդիր (օրինակ՝ *ընդ երկինս, ըստ օրէնս* և այլն)²⁹:

Գրաբարի քերականությունն այստեղ գործնական նպատակ է հետապնդում՝ նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի ուսումնական հիմքի ապահովում, որպիսով լեզվի իմացությունը դառնում է ավելի ընդգրկուն, ավելի ամբողջական՝ իր պատմությամբ և արդի վիճակով:

«Դասական հայերենի» գյուտի հեղինակ Վիեննայի Մխիթարյանները հայերենի իմացության և գործածության հարցում, առհասարակ, ավելի գործնական խնդիրների լուծմանն են հետամուտ, ի տարբերություն վենետիկյանի, որ հայերենի, մանավանդ նրա հին վիճակի (գրաբարի), այսպես կոչված, ճանաչման և վերականգնման փորձերում հետամուտ են նրա տեսական լայն ընդգրկմանն ու արժևորմանը (օրինակ՝ Միք. Չամչյանի, Գ. Ավետիքյանի, Արս. Բագրատունու քերականությունները)³⁰:

Այստեղ ևս հիշենք Այտընյանի հիմնական դրույթը՝ «Ներկան անցածով լուսաւորելու է». երևույթի պատմականության բացահայտ հիմունք:

«Քննական քերականությունից» դուրս և նրան հարող աշխատանքներ

Ա. Այտընյանը, ի տարբերություն իր գործընկեր հայագետների և առհասարակ գիտական մտքի մեծությունների, հարուստ չէ իր գիտական վաստակով, լույս ընծայած աշխատություններով: Ա. Չոպանյանը, օրինակ, այս առումով գրում է. «Այտընեան ամբողջ մատենադարան մը չի թողուր մեզի՝ Ալիշանի պէս, այլ մէկ գիրք մը միայն՝ «Աշխարհաբարի քննական քերականութիւն»-ը, բայց այդ միակ գիրքը կը բաւէ անկորուստ պահելու իր անունը, որովհետեւ գործ մըն է գերազանցապէս ամուր ու կատարեալ, յափտենապէս կենսունակ գործ մը որ ոչ միայն կ'ապացուցանէ զայն իրականացնողին հզոր, պայծառ ու լրջօրէն կազմուած միտքը, այլ եւ զայն յղացողին յանդուգն ու կանխատես ոգին, արդարեալ»³¹:

Այտընյանի անմիջական ջանքերի շնորհիվ Վիեննայի Մխիթարյանների միջավայրում հիմնվում է «Հանդես ամսօրյա» ամսագիրը (1887 թ.), որը լույս է տեսնում մինչև օրս: Այն ունեցել է հսկայական նշանակություն հայ հասարակական մտքի առաջընթացի բնագավառում: Ի թիվս հայերենագիտական նյութերի՝ նրանում լույս են տեսնում նաև իր իսկ հիմնադրի տարբեր ծավալի և բնույթի գիտական հոդվածները³²: Դրանք պակաս նպաստավոր չեն նոր

²⁹ Նման մանրամասնություններ ու պարզ խմբավորումներ նկատելի են այս բաժնի գրեթե բոլոր իրողությունների քննության մեջ, որոնց անդրադառնալը դուրս է մեր այս աշխատանքի բուն նպատակից:

³⁰ Չ ա մ չ ե ա ն. 1779, Ա լ ե տ ի ք ե ա ն. 1815, Բ ա գ ր ա տ ո ն ի. 1852:

³¹ Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1902, 315:

³² «Հանդես ամսօրեայ». 1887, 133-135, 1888, 75-77, 97-104, 117-122, 149-155, 165-168, 208-213, 1889, 37-40, 1898, 377-380:

գրական լեզվի («աշխարհաբարի») հասարակական-հաղորդակցական դերի գնահատության և գործառական կողմի կարևորության ամրապնդման գործում:

Այտընյանի «Տառադարձության խնդիր» ծավալուն հոդվածը ժամանակին ունեցել է իր նշանակությունը գրաբարի կամ աշխարհաբարի ընտրության հարցում ծավալված հակառակության («գրապայքարի») կողմնորոշման առումով: Այն ըստ այդմ էլ գնահատվել է՝ իբրև կարևոր միջամտություն հարցի ճիշտ և նպատակային լուծման մեջ: Այդուհանդերձ այդ հոդվածն ունի նաև այլ նշանակություն, որ այնքան էլ չի եղել ուշադրության առարկա մինչև այժմ երևան եկած աշխատանքներում. դա հայերենի հնչյունաբանության, ավելի կոնկրետ՝ բաղաձայնական համակարգի (իմա՝ «մեսրոպյան գրերի») նոր գրականում գործածվող արտասանությունն է («տառադարձությունը»՝ օտար բառերի, սովորական և հատուկ անունների և այլն), որ ներկայանում է տարածքային տարբերակվածությամբ՝ լեզվի արևելյան և արևմտյան հատվածներում, արևելյանը եռաշարք՝ բ [b / bh], պ [«գուտ» b], փ [ph] (պարզ կամ շնչեղ), արևմտյանը երկշարք՝ բ [p], պ [p], փ [ph] ձայնեղագուրկ՝ խուլ (պարզ կամ շնչեղ) արտասանություն:

Վերը նշված հոդվածն ունի ավելի հեռուն գնացող ենթատեքստ, որը, ըստ Այտընյանի առջև ծառայած խնդրի, ոչ այլ ինչ է, քան հայերենին անցած օտար բառերի գրադարձություն (տրանսլիտերացիա): Նրանում, իրոք, կա բանավեճ «Բազմավեպ» ամսագրի 1840-ական թվականներին լույս ընծայած համանման հոդվածների առիթով (այս անգամ ևս՝ վենետիկյան / վիեննական հակառակություն) (էջ 73–77, 97–104), ինչպես նաև հակառակ Գ. Այվազյանի (տե՛ս էջ 102–103), Ղ. Աղայանի (տե՛ս էջ 117–122, 149–155). վերջինս նույն թեմայով հոդված է տպագրել «Արարատ» ամսագրի էջերում (այս դեպքում էլ հակառակություն, այսպես կոչված, Թիֆլիսի / Կ. Պոլսի, այլ կերպ՝ արևելահայ / արևմտահայ մշակութային կենտրոնների միջև): Բանավեճի («հակառակության») ընդհանուր սահմանումը հետևյալն է. նոր գրական հայերենի արտասանությունը երկփեղկված է, և դա նկատելի է ամենից առաջ բաղաձայնական համակարգում պայթականների՝ բ [b], գ [g], դ [d] և այլն, մի կողմից՝ ձայնեղ / խուլ, մյուս կողմից՝ պարզ / շնչեղ (հակադրության պայմաններում) երկակի արտասանության մեջ, որ երկվություն է առաջ բերում, օրինակ, օտար բառերի գրադարձության հարցում:

Այդ հարցում հեռուն գնացող է այն, որ եվրոպացի հայագետները (Հ. Պեդերսեն և ուրիշներ) ավելի ուշ այդ երկակիությունը դիտեցին որպես էական հատկանիշ՝ հնդեվրոպական լեզուների նախնական (սկզբնական) վիճակի վերանայման համար³³: Հեռուն գնացող է նաև այն, որ Պեդերսենի հիշյալ դիտարկման հիման վրա 1970-ական թվականների սկզբներին կտրուկ քայլ կատարվեց հնդեվրոպական լեզուների ավանդական (դասական) բաղաձայնական համակարգի վերանայման հարցում³⁴:

³³ Տե՛ս Pedersen. 1904, 334–484.

³⁴ Տե՛ս Гамкрелидзе, Иванов. 1972, 15–18.

Ինչպես տեսնում ենք, Այտընյանի (այդ ընթացքում նաև ուրշների) դիտարկումով հնչյունաբանական խնդիրը եղել է հրատապ՝ նոր գրական լեզվի երկու տարբերակների միջև առաջ եկած տարբերությունը ոչ միայն քննելու և արժևորելու, այլև դրանց միասնականացման եզրեր գտնելու առումով, որն, ի դեպ, մինչև օրս մնում է չլուծված:

«Քննական քերականության» երկրորդ մասը, ինչպես վերը նշել ենք, նվիրված է արևմտահայ աշխարհաբարի նկարագրական վերլուծությանը, ունեցել է շարունակություն: Մեկ տարի անց լույս է տեսնում նույն հեղինակի արևմտահայ աշխարհաբարին նվիրված մենագրությունը³⁵:

Ի դեպ՝ Այտընյանի քերականական աշխատության առաջին գնահատողը մեծանուն հայագետ Հ. Պետերմանն է, որ գրքի լույս տեսնելու հաջորդ տարում գրում է ուշադրության արժանի գրախոսություն³⁶:

Եզրակացություն

Նախանցյալ դարի հայերենագիտության բնագավառում մեծ տեղ ունի Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որի անվանի ներկայացուցիչներից է Արսեն Այտընյանը:

Հին գրավոր հայերենի «դասական» և հետագա (ոչ դասական) որակների առանձնացման մենաշնորհը պատկանում է վիեննական դպրոցին: Այտընյանն այդ գործում եղել է տեսաբան՝ իբրև ժամանակի ընդհանուր լեզվաբանության, հայերենի պատմության ուսումնասիրող:

Այդ բնագավառում Այտընյանի գլուխգործոցը «Քննական քերականություն» աշխատությունն է, որը լույս է տեսել ժամանակին, ընդօրինակմամբ (Ֆաքսիմիլե)՝ նաև վերջին ժամանակներս: Նրանում հայերենի գոյածի ինքնության հարցերը նա քննել է ժամանակի եվրոպական կուլտուր-պատմական դպրոցի հիմունքներին առնչվող իր մտտեցումներով: Լեզվի փաստական-ընտրանքային նյութի (Բուզանդի, Մծբնացու, Փարպեցու, այլև Դավիթ Անհաղթի որոշ բնագրերի) հիման վրա սահմանել է հին և հետագա հայերենի գրական և ոչ գրական («աշխարհաբար») տարբերակումը, որ բացառիկ օրինակ է հայոց լեզվի պատմության համար, լիովին արդիական է և հեռանկարային:

Հայոց լեզվի պատմության համար կարևորություն ունեն նաև Այտընյանի մյուս աշխատանքները՝ հայերենի նորմատիվ նկարագրական քերականությունը, Վրթ. Չալրխյանի քերականության վերանայված և համալրված («բարեփոխված») հրատարակությունը, գիտական հանդեսներում լույս տեսած աշխատանքներից մի քանիսը, առանձնապես «Տառադարձության խնդիր» և «Լեզու և առանձին մեր հայերեն լեզուն» հոդվածները: Դրանցում Այտընյանն ունի այնպիսի խորը դիտարկումներ, որոնք, իբրև տեսական առաջավոր գաղափարներ, նկատվել են հետագա ուսումնասիրողների կողմից հայերենի և նրան ցեղակից այլ լեզուների առնչությունների մեջ: Նկատում ենք նախագրային շրջանի հայերենի բնույթի վերաբերյալ մեծ լեզվաբանի տեսական

³⁵ Այտընյան. 1867:

³⁶ Petermann. 1867, 674–679.

մոտեցումների դրսևորումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ լուրջ վերանայումների ավանդական (դասական) հայագիտության մեջ:

Մեկուկես հարյուրամյակից ավելի ժամանակ է անցել, և Այտրնյանի «Քննական քերականության» կարևորությունն այսօր ևս զգալի է հայ բազմադարյան գրական հուշարձանների լեզվական-լեզվաբանական նոր քննությունների ձեռնամուխ լինելու համար:

Արսեն Այտրնյանը հայերենագիտության երևելի, անմոռաց դեմք է հայ բազմադարյան մշակույթի անդաստանում:

Վազգեն Համբարձումյան – ք. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, տիպաբանություն, լեզվի պատմություն, բարբառագիտություն և բառարանագրություն, ոճաբանություն: Հեղինակ է 28 մենագրության և 280 հոդվածի: vazgengurgeni@mail.ru, hambardzumyanvazgen01@aspu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Ա. 1945, Արսեն Այտրնյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության «Նախաշավիղը». – «Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի աշխատությունների ժողովածու», Երևան, 2, էջ 215–255 [Abrahamyan A. A. 1945, “The Preface” of Arsen Aytinyan’s Critical Grammar of Ashkharhabar or the Modern Armenian Language”. – “Proceedings of the Armenian State Pedagogical Institute”. Yerevan, 2, p. 215–255 (in Armenian)]:

Աբրահամյան Ա. Ա. 1969, Արսեն Այտրնյան. – Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 352 [Abrahamyan A. A. 1969, Arsen Aytinyan. – Armenian Soviet Encyclopedia, V. 1. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, p. 352 (in Armenian)]:

Աբրահամյան Ա. Ս. 1984, Արսեն Այտրնյանի լեզվաբանական հայացքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 216 էջ [Abrahamyan A. S. 1984, The Linguistic Views of Arsen Aytinyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 216 p. (in Armenian)]:

Ադոնց Ն. 1915, Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, Կայսերական գիտությունների ակադեմիայի հրատ., 307 էջ [Adonts N. 1915, The Art of Dionysius Grammarian and Armenian Interpretations on His Work. St. Petersburg: Imperial Academy of Sciences, 307 p. (in Armenian)]:

Աղայան Է. Բ. 1958, Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 412 էջ [Aghayan E. B. 1958, History of Armenian Linguistics (from the Beginning to the Present Day), V. 1, Yerevan, YSU Press, 412 p. (in Armenian)]:

Աղայան Է. Բ. 1974, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 58–81 [Aghayan E. B. 1974, The Periodization of the History of Grabar. – “Bulletin of Yerevan State University”, № 2, p. 58–81 (in Armenian)]:

Այտրնյան Ա. 1987, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, ԵՊՀ հրատ., 866 էջ [Aytinyan A. 1987, Critical Grammar of Ashkharhabar or the Modern Armenian Language. Yerevan, YSU Press, 866 p. (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1856, Մատենագրական խորհրդածություններ. – «Եվրոպա» (Վիեննա), էջ 106–107, 111, 118–119 [Aytinyan A. 1856, Literary Studies – “Evropa” (Vienna), p. 106–107, 111, 118–119 (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1860–1861, Լեզու եւ առանձին մեր հայերեն լեզուն. – «Սէր (Ուսումն հնգետասանօրեայ)», 1860 (Կ. Պոլիս), էջ 29–30, 47–48, 1861, էջ 73–76, 122–128, 153–159, 187–188, 197–204 [Aytinyan A. 1860–1861, Language and Our Armenian Language – “Ser (A Pedagogical Periodical)”, 1860 (Constantinople), p. 29–30, 47–48; 1861, p. 73–76, 122–128, 153–159, 187–188, 197–204 (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1866, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, հանդերձ ներածութեամբ եւ յաւելրածով, յօրինեաց հայր Արսէն Այտրնեան, Վիեննա, 502 էջ [Aytinyan A. 1866, Critical Grammar of Ashkharhabar or of the Modern Armenian Language with Introduction and Supplement Compiled by Father Arsen Aytinyan. Vienna, 502 p. (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1867, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 257 էջ [Aytinyan A. 1867, Grammar of Ashkharhabar or of the Modern Armenian Language. Vienna, Mekhitarist Press, 257 p. (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1887, Նորագոյն հայերեն լեզուն. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), էջ 133–135 [Aytinyan A. 1887, The Modern Armenian Language – “Handes Amsorya” (Vienna), p. 133–135 (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1888–1889, Տառադարձութեան խնդիր. – «Հանդէս ամսօրեայ», էջ 75–77, 97–104, 117–122, 149–155, 165–168, 208–213, էջ 37–40 [Aytinyan A. 1888–1889, The Problem of Transliteration. – “Handes Amsorya”, p. 75–77, 97–104, 117–122, 149–155, 165–168, 208–213; p. 37–40 (in Armenian)]:

Այտրնեան Ա. 1898, Ա. Մէյլե, Հետազօտութիւնք ի վերայ համեմատական համաձայնութեան հայերեն լեզուի. – «Հանդէս ամսօրեայ», էջ 377–380 [Aytinyan A. 1898, Review of A. Meillet, Research on the Comparative Grammar of the Armenian Language. – “Handes Amsorya”, p. 377–380 (in Armenian)]:

Աւետիքեան Գ. 1815, Քերականութիւն հայկական, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 580 էջ [Avetikean G. 1815, Armenian Grammar. Venice, St. Ghazar Press, 580 p. (in Armenian)]:

Առաքելյան Վ. Դ. 1981, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 214 էջ [Arakelyan V. D. 1981, Essay on the History of Armenian Literary Language. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 214 p. (in Armenian)]:

Աճեմյան Վ. Լ. 1971, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 293 էջ [Atchemian V. L. 1971, The Formation of Literary Western Armenian. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 293 p. (in Armenian)]:

Բագրատունի Արս. 1852, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 744 էջ [Bagratuni Ars. 1852, Armenian Grammar for the Learned. Venice, 744 p. (in Armenian)]:

Յակոբ Մծբնայ Հայրապետ. 1824, Գիրք որ կոչի Ջգօն: Արարեալ Ս. Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի, Պօլիս, տպ. Մահտեսի Յօհաննեան, 340 էջ [Jakob Mtsbin Hayrapet. 1824, The Book Called Zgon, Composed by St. Yakob of Mtsbin, the Blessed Patriarch of the City of Mtsbin. Constantinople, Printed by Mateos Yohanean, 340 p. (in Armenian)]:

Համբարձումյան Վ. Գ. 1990, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ժԸ-ժԹ դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 412 էջ [Hambardzumyan V. G. 1990, The Function of Grabar as a Literary Language in the 18th–19th Centuries. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 412 p. (in Armenian)]:

Համբարձումեան Վ. Գ. 1995, Հ. Վրթանէս Չալրիսեանը եւ Վիեննական հայերէնագիտութիւնը. – «Հանդէս ամսօրեայ», էջ 360–379 [Hambardzumyan V. G. 1995, H. Vrtanes Chalekhyan and Viennese Armenian Studies. – “Handes Amsorya”, p. 360–379 (in Armenian)]:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց. 1904, Տիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 211 էջ [Khazar Parpetsi's History of the Armenians. 1904, Tiflis, Printed by Martirosyan, 211 p. (in Armenian)]:

Մենեսիշեան Գ. 1895, Կենսագրական ակնարկ գերաշնորհ Արսէն արքեպիսկոպոս Այտրնեան ընդհանրական աբբայի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 47 էջ [Menevishian G. 1895, Biographical Sketch of the Eminent Archbishop Arsen Aytinian, Universal Abbot. Vienna, Mekhitarist Press, 47 p. (in Armenian)]:

Չալրիսեան Վրթ. 1885, Քերականութիւն հայկազնեան լեզուի հանդերձ փոփոխմամբք եւ կարեւոր յաւելումովք աշխատասիրեալ ի հ. Արսենէ Այտրնեան, Վիեննա, տպ. Մխիթարեան, 276 էջ [Chalekhyan Vrt. 1885, Grammar of the Armenian Language with Changes and Important Addenda, Prepared by Father Arsen Aytinian, Vienna, Mekhitarist Press, 276 p. (in Armenian)]:

Չամչեան Միք. 1779, Քերականութիւն հայկական լեզուի, Վենետիկ, տպ. Դեմետրիոս Թէոդոսիոսի, 600 էջ [Chamchyan Mik. 1779, Grammar of the Armenian Language. Venice, Printed by Demetrios Theodosius, 600 p. (in Armenian)]:

Պետրոսյան Հ. Զ. 1987, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., էջ 31–32 [Petrosyan H. Z. 1987, Armenian Linguistic Dictionary, Yerevan, “Hayastan” Publishing House, p. 31–32 (in Armenian)]:

Ջահուկյան Գ. Բ. 1954, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ [Jahukyan G. B. 1954, Grammatical and Orthographical Works in Ancient and Medieval Armenia. Yerevan, YSU Press, 396 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. Բ. 1955, Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII–XIX դարերում (դոկտորական ատենախոսություն, ձեռագիր), Երևան, 1954, էջ 394–456 [Jahukyan G. B. 1955, Armenian Linguistic Thought and the Issues of Ashkharhabar in the 18th–19th Centuries (Doctoral Dissertation, manuscript). Yerevan, 1954, p. 394–456 (in Armenian)]:

Ջահուկյան Գ. Բ. 1960, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ [Jahukyan G. B. 1960, History of Linguistics, V. 1. Yerevan, YSU Press, 636 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. Բ. 1964, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, ԵՊՀ հրատ., 446 էջ [Jahukyan G. B. 1964, The Periods of the Development of the Armenian Language. Yerevan, YSU Press, 446 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. Բ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 346 էջ [Jahukyan G. B. 1972,

Introduction to Armenian Dialectology (Statistical Dialectology). Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 346 p. (in Armenian):

Ջահուկյան Գ. Բ. 1974, Գրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ [Jahukyan G. B. 1974, The History of Grabar Grammar (17th–19th Centuries). Yerevan, YSU Press, 560 p. (in Armenian)]:

Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց. 1832, Վենետիկ, Ս. Ղազար, 278 էջ [Pavstos Buzand's History of the Armenians. 1832, Venice, St. Ghazar Press, 278 p. (in Armenian)]:

Гамкредидзе Т. В., Иванов Вяч. Вс. 1972, Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных. – «Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков» (12–14 декабря). Предварительные материалы. Москва, с. 15–18 [Gamkrelidze T. V., Ivanov V. V. 1972, Linguistic Typology and Reconstruction of the System of Indo-European Stops. – “Conference on Comparative-Historical Grammar of Indo-European Languages” (December 12–14). Preliminary Materials. Moscow, p. 15–18 (in Russian)].

Патканов К. П. 1864, Исследование о составе армянского языка. С. Петербург, типография Императорской Академии наук, 110 с. [Patkanov K. P. 1864, Research on the Structure of the Armenian Language. St. Petersburg, Publishing House of Imperial Academy of Sciences, 110 p. (in Russian)].

Melllet A. 1936, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 207 p.

Pedersen H. 1904, Armeniesch und die Nachbarsprachen. – “Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete der indogermanischen Sprachen”, Band 39, Heft 2, Berlin, s. 334–484.

Petermann H. 1867, Über die kritische Grammatik der armenischen Vulgärsprache von dem wardapet (Dr. Th.) Arsen Aytinean. – “Auszug aus dem Monatsbericht der Königl. Akademie der Wissenschaft zu Berlin (“Sitzung der philosophisch-historischen Klasse”. Berlin, p. 674–679)”.
 Պատմագրությունը

АРМОНОВЕДЧЕСКОЕ НАСЛЕДИЕ АРСЕНА АЙТЫНЯНА

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Резюме

Ключевые слова: Арсен Айтынян, арменоведение, общественная природа языка, эволюция, перманентность, синхрония, древнеармянский («grabar»), / новоармянский («ашхарабар»), литературный язык / диалекты.

Арсен Айтынян (1825–1902) – выдающийся представитель европейского арменоведения, теоретик языкознания и практический исследователь истории армянского языка, оставивший неизгладимый след в развитии арменоведения в сфере лингвистики и филологии в целом,

Деятельность Мхитаристской конгрегации в Вене во второй половине XIX века полностью связана с его именем. Он являлся ключевой фигурой в вопросах армянского языка в контексте общей и теоретической лингвистики

своего времени – области, которая изначально и вплоть до наших дней освещает путь развития арменоведения.

В вопросах идентичности форм языков, особенно армянского, он придерживался определенной точки зрения, которая носила общий теоретический характер и не была субъективной, а базировалась на объективных фактах и языковых реалиях. Проведенный им анализ текстов Бузанда, Акопа Мцбинци, Парпеци и Давида Анахта и предложенные им образцы лексико-теоретических исследований остаются актуальными по сей день. Его труды служат основой для дальнейших исследований.

Прошло более полутора веков, но «Критическая грамматика» А. Айтыняна до сих пор остаётся «настольной книгой» (А. Мейе) каждого исследователя.

Лингвистическое и арменоведческое наследие Арсена Айтыняна не теряет своей актуальности, особенно для переосмысления ключевых вопросов истории армянского языка.

Вазген Амбарцумян – д. филол. н., проф., заведующий отделом общего и сравнительного языкознания Института языка им. Р. Ачаряна НАН РА, заведующий кафедрой армянского языка и методики его преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: общее и сравнительное языкознание, история языка, типология языков, диалектология и лексикография. Автор 28 монографий, 280 статей. vazgengurgeni@mail.ru, hambardzumyanvazgen01@aspu.am

ARMENOLOGICAL INHERITANCE OF ARSEN AYTINIAN

VAZGEN HAMBARDZUMYAN

Summary

Keywords: Arsen Aytinian, armenology, social nature of the language, evolution. permanence, synchronism, Old Armenian (Grabar) / New Armenian (Ashkhara-bar), literary language / dialects.

Arsen Aytinian (1825–1902), a prominent representative of European Armenian studies, a theorist of linguistics and a practical researcher of the history of the Armenian language. He left an indelible mark on the advancement of Armenian studies in the field of linguistics and philology in general.

The activity of the Vienna Mekhitarist Congregation in the second half of the 19th century is fully connected with his name. He was an authority in the field of Armenian language in the context of general and theoretical linguistics of his time - a field that has broadly illuminated the development of Armenian studies from the very beginning and to this day.

In the matters of the identity of language form, especially Armenian, he adhered to a certain point of view, which was of a general theoretical nature and was not subjective, but based on objective facts and linguistic realities. His analysis of the texts of Buzand, Hagob Mtsbinatsi, Parpetsi, and David Anhaght, as well as the models of lexical-theoretical research that he proposed, remain relevant to this day. His works serve as basis for further research.

More than a century and a half has passed, but A. Aytinian's "Critical Grammar" still remains a "desk book" (A. Meillet) for every researcher.

Arsen Aytinian's linguistic and armenological heritage remains relevant, especially for rethinking key issues in the history of the Armenian language.

Vazgen Hambardzumyan – Doctor of Sciences in Philology, Professor, Head at the Department of General and Comparative Linguistics of the Language Institute after H. Acharyan of NAS RA, Head at the Department of Armenian Language and Methods of its Teaching of ASPU after KH. Abovyan. Scientific interests: general and comparative linguistics, language history, typology of languages, dialectology and lexicography. Author of 28 monographs and 280 articles. vazgengurgeni@mail.ru, hambardzumyanvazgen01@aspu.am